

քրիստոնեաներու ձեռքն էր, մեր ներշնչած վստահութեան համար: Կրնանք ըսել թէ բան չէ պակսած, ու խաղաղութեան մէջ Արաբկերցին դիզած է գանձ, գիտութիւն եւ կեանքի փորձառութիւն: Յատկապէս հայ Կաթող. առաջնորդ վարդապետները մեծ պատիւ, համբաւ եւ վստահութիւն կը վայելին թուրք կառավարութեան քով եւ ամբողջ հայութեան սրտին մէջ՝

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐՂԵՐԸ

Մարդս իր գոյութեան առաջին օրէն հարկը դրացած է ինքնապաշտպանութեան, քանի որ զանազան տեսակէտներով խոցելի էր զինքը շրջապատող տարրերէն եւ կենդանիներէն, որոնք յարատեւօրէն կը սպառնային իր կեանքին: Նախապատմական շրջանին մարդս չունէր ինքնապաշտպանութեան ազդու միջոցներ. չկային ոչ մեքենական զէնքեր, ոչ անտիկ պատսպարաններ եւ ոչ ալ հիւանդութիւններու հակազդող դեղեր: Վտանգի պարագային՝ կ'ապաւինէին լեռներու բարձունքներուն վրայ կամ ժայռերու մէջ գտնուած քարայրները. տակաւ սկսած էին շինել խոռոչներ անտառներու մէջ, կամ հիւղակներ՝ լիճերու վրայ:

Շատ հին ժամանակներու մէջ ինքնապաշտպանութիւնը անհատական էր, եւ գլխաւորապէս հիմնուած ֆիզիքական ոյժին վրայ. երբ մարդկային կեանքի յեղաշրջումով այս միջոցները անգործ դարձան, ապա մարդիկ դիմեցին հաւաքական պաշտպանութեան հնարքներու. մարդիկ որ ցրուած էին լեռներու եւ անտառներու մէջ՝ իրարու քով հաւաքուեցան, կազմեցին ցեղախումբեր, ստեղծուեցան գիւղեր

իրենց գիտութեամբ, խոհմութեամբ, հայրենասիրութեամբ ու քաղաքագիտութեամբ. արդարեւ ասոնց գիմումներով թուրք կառավարութիւնը շատ մը հարցերու աչք կը դոցէր, բանտերէն յանցաւոր կարծուածները կ'ազատէր եւ որ ըստ կարգի, մինչեւ հասաւ աղէտի թուակաւոր, որ մեր պատմութեան աւելջը դեռ:

Հ. ԱԼԵՔՍԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

եւ քաղաքներ եւ բարձրացան հասարակաց պաշտպանութեան բերդեր ու պարսպապատ քաղաքներ, գծուեցան նաեւ ազդերու մէջ հողային սահմաններ: Սահմանափակելով մեր ուսումնասիրութիւնը՝ մեր ազգային ինքնապաշտպանութեան եւ մեր երկրին մէջ, կրնանք ըսել թէ Հայաստան՝ ամէնէն առաջին երկիրներէն մէկը եղաւ՝ ուր բարձրացան մարդկային առաջին ինքնապաշտպանութեան բերդերը. մեր երկրին բնական դիրքը, բարձրաբերձ լեռները, խոր անդունդները անմերձեանի բերդաքաղաքի մը երեւոյթը ունին, ուր քաղաքացան մեր նախահայրերը, պաշտպանելու համար իրենց գոյութիւնը, եւ հոն այդ հսկայ լեռներուն վրայ էր որ բարձրացուցին Հայաստանի առաջին բերդերը:

Որո՞նք կանգնած են մեր ինքնապաշտպանութեան առաջին բերդերը, որո՞նք եղած են մեր առաջին բերդերը. պիտի ջաղանք պատասխանել այս հարցումներուն մեր այս համառօտ ուսումնասիրութեան մէջ, աւելցնելով համառօտ ակնարկ մը մեր հայ բերդերու կատարած դերին եւ անոնց արուեստի մասին:

Հայաստանի հնագոյն բերդերը

Հայաստանի հողը հնախօսական տեսակէտով տակաւին բոլորովին ուսումնասիրուած չէ, եւ ամբողջովին պեղումներ կատարուած չեն, եւ մեր պատմութեան պատմական շրջանի առեղծուածը տակաւին լուծուած չէ. մինչեւ այսօր եղած քննութիւնները եւ հնախօսական պեղումները ցոյց կու տան՝ թէ պատմական շրջանին մեր հողին վրայ ապրել են ուրիշ ժողովուրդներ, քաջարի եւ կորովի ազգեր, որոնք անմահացուցած են իրենց յիշատակը բազմաթիւ բեւեռադիր արձանադրութիւններով, ուր կայ արձագանգը Ասորեստանի դէմ մղած երկարատեւ պատերազմներուն. այդ ժողովուրդը կը կոչուէր Նայիր – ուրարտացի:

Երբ Քրիստոսէ առաջ 1410-ին ասորեստանցի թագաւորները ոտք կոխեցին Նայիրեան հողին վրայ, իրենց դէմ դտան զօրաւոր եւ կազմակերպուած բանակ մը, որ դիւրաւ տեղիք չտուաւ ասորեստանեան ոյժերուն: Անոնք երկար դարեր կուր մը ղեկին այդ հզօր բանակներուն դէմ, եւ շատ անգամ դուրս վտարեցին զանոնք, մինչեւ որ քայքայուած եւ տկարացած երկար կռիւներէ՝ նուաճուեցան ասորեստանեան հզօր բանակներէն:

Այս շրջանի (ն. Ք. 2000–1410 եւ 1410 – 860) բեւեռադիր արձանադրութիւնները ցոյց կու տան՝ թէ մեր երկրին մէջ կային ինքնապաշտպանութեան բազմաթիւ բերդեր եւ ամրոցներ. այսպէս, Ասուր–Նազիր – Արալ (885–860) երբ տիրեց Նայիրի եւ նախ Նոււմի–ի, որ Արաւմանիի աջ ափին վրայ կը տարածուէր, կ'ըսէ իր բեւեռադիր արձանադրութիւններուն մէջ. «Մարդիկ քաղուեցան... դժուարամտօյց լեռ մը... եւ հոն կառուցին արծուի բոյնի նման ամրոց մը. հոն՝ ուր իմ նախահայրերս չէին կրցած բարձրանալ, երեք օր ուն մէջ բարձրացայ... եւ կործանեցի

իրենց բոյնը...: Ասիկա ցոյց կու տայ թէ այդ ամրոցը իրմէ շատ տարիներ առաջ գոյութիւն ունեցեր է, ուր չեն կրցած բարձրանալ իր նախահայրերը եւ կ'ենթադրուի որ դոնէ 1500–1000-ի ատենները այդ ամրոցը գոյութիւն ունենար:

Ի՞նչ կը կոչուէր այդ ամրոցը. արձանադրութիւնը չի՞ որոշեր, սակայն կու տայ ուրիշ ամրոցներու անուններ նոյն շրջաններուն մէջ. նոյն աշխարհակալը կ'ըսէ. «Յարձակեցայ Պետուրա ամրոցին վրայ, որուն բնակիչները գերի ինկան...: Թէ ո՛ւր կը գտնուէր այս ամրոցը՝ նոյնպէս անորոշ է. հաւանաբար Արաւմանիի ափերուն վրայ, ուր մղուեցան ասորեստանեան առաջին կռիւները:

Ասուր–Նազիր–Արալ, կը յիշէ նաեւ Դանդամուգա բերդը, որուն կը տիրէ առանց երկար դիմագործեան:

Այս երեք հնագոյն բերդերուն մասին մանրամասնութիւններ կը պակսին, սակայն կան ուրիշ բերդեր եւս որոնք տակաւին պեղումներու կը կարօտին: Վերջերս Հայաստանի հնախօսական հաստատութիւնը իր պեղումները կատարելով Կարմիր բլուրի շրջանին մէջ, դուրս հանած է հնադարեան քաղաք մը իր Թեւ–րիաւի բերդով, եւ ըստ հնախօսներու, այս բերդը գոյութիւն է ունեցեր է. դարուն (ն. Ք.), ուր գտնուած են նաեւ պղնձէ սաղաւարտներ, զրահներ եւ զէնքեր՝ Մե–նուսա Ա.ի մակագրութեամբ, որ ապրած եւ թագաւորած է 800–780 (ն. Ք.):

Բերդ մը որուն մասին մանրամասնութիւններ ունինք եւ որուն մասին շատ անգամներ կը խօսին բեւեռադրութիւնները եւ հայ թէ օտար պատմիչները՝ Վան կամ Վան Տոսպ բերդն է: Ատոր մասին առանձին պիտի խօսինք: Հոս առ այժմ ըսենք՝ թէ Վանի բերդը Նայիր Ուրարտեան շրջանին ամէնէն մեծ կառուցուածքներէն է համանուն լճի ափին բարձրացող քարա–ժայռերուն վրայ: Իր հնութեան վկաններն

են իր կողերուն վրայ քանդակուած բազմաթիւ բեւեռադրութիւնները:

Մ. Խորենացի իր աշխարհագրութեան մէջ կը յիշէ Տոսպ յեղից Բզնունեաց (լրճին)(1): Փ. Բիւզանդ կը պատմէ «Ամուր քաղաքն Վան, որ է ի վաւառին Տոգբայ»(2): Իսկ ուրիշ տեղ մը կը յիշէ Վանը իբրեւ բերդ եւ միջնաբերդ «ի միջնաբերդն Վան բերդի»(3), եւ երբեմն ալ Տոսպը իբրեւ վաւառ «ի Տոսպ վաւառին»: Թովմա Արծրունի երբեմն Վանը եւ Տոսպը միացուցած կը յիշատակէ, «ի վաւառսպ ի քաղաքն Շամիրամայ»(4): Պտղոմէոս յոյն պատմիչը կը յիշէ Փասքիւ բերդ քաղաք եւ Փասքիւ իբրեւ լիճ եւ երկիր: Ստրաբոն կը յիշատակէ Թոսպիտէս լիճը: Իսկ Պլինիոս կը թուէ Խաղտէական սեպուղի արձանագրութեան մէջ Տուշպա, իբր զիսաւոր քաղաք Բիանա պետութեան եւ երկրին: Ասոր համաձայն Տուշպա հին քաղաքանունը՝ եղած է հայոց քով երկրանուն, իսկ քաղաքը՝ Վան նոր անունն առած է:

Ասորեստանի թագաւորներու արձանագրութեանց համեմատ, Ուրարտուի թագաւորները ունէին իրենց յատուկ բերդերը, ամուր տեղերու մէջ կառուցուած, ժայռի մը կողքին, լեռան մը կատարը, զետի մը ափունքը, կամ կղզիի մը վրայ, ուսկից կրնային հսկել հեռուէն եկող վերահաս վտանգը. այսպէս Տոսպ (այսօրուան Վան) Հայաստանի նախարանիկներու հրաշակերտը, շինուած է մէկը միւսէն

բարձր երեք կամարներու վրայ լճին ափին, ուր թիկնապահ գունդ մը կրնար տարիներով դիմադրել բանակի մը:

Ուրիշ իբրեւ հին բերդ եւ բերդաքաղաք կը յիշատակուին մեր պատմիչներէն Արմաւիր, Արտաշատ եւ Արտագերս:

Արմաւիր, որ կը գտնուի Արարատի Արագածոտն վաւառին մէջ, բլրակի մը վերայ. ըստ աւանդութեան, շինուած է մեր Արմայիս նահապետէն. «Արմայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք զետոյն եւ անուանէ զնա յիւր անուն Արմաւիր»(5): Եղիշէ կը յիշէ Արմաւիր քաղաքը իր բերդով(6): Իսկ ըստ Բեքի, Արմաւիր ն. Բ. 770-ին շինուած է Արգիստիս Ա.էն, եւ մեր Արամայիս նահապետին հետ կապ չունի, եւ անտարակոյս նախահայկական է(7): Բ. դարուն Պտղոմէոս յոյն պատմիչը քաղաքս կ'անուանէ Ἀρμαυίρα (Արմաուիրա): Բուն բերդը որ հաւանաբար հայկական շրջանին շինուած է, ողջ էր դեռ մինչեւ Ե. դարու կիսուն, զոր Վասակ դրաւեց եւ կործանեց:

Արտաշատ եւս եղած է մեր հին բերդաքաղաքներէն մին, եւ շինուած է Երասխի ափին Արտաշէս հայկազն իշխանէն, 190 թուականին Քրիստոսէ առաջ, Աննիբաղ Կարգեղոսացի իշխանին խորհուրդով: Ստրաբոն կը յիշէ իր պատմութեան մէջ Արտաշատի բերդը, իբրեւ ամուր ապաստանարան(8):

Արտագերս եւս մեր նշանաւոր հին բերդերէն է եւ կը գտնուի Արարատի Արշա-

(1) Մ. Խորենացի, Աշխարհացոյց - յաւելուածովք նախնեաց - (Հրատ. Հ. Ա. Սիւքրի), Վենետիկ, 1881, էջ 32:

(2) Փ. Բիւզանդ, Դ. տղ. Վենետիկ, 1933, էջ 179:

(3) Անդ, էջ 184:

(4) Թովմա Արծրունի. Պատմ. Տանն Արծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 68:

(5) Մ. Խորենացի, Պատմ. Հայոց (Մատենադրութիւնք), Վենետիկ, 1865, Ա-ԺԲ. էջ 27:

(6) Եղիշէ, Պատմ. Վարդանանց եւ հայոց պատերազմին, Վենետիկ 1893, էջ 145:

(7) Հ. Հիւրշման, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 311:

(8) Անդ, էջ 316:

րունեաց վաւառին մէջ. անոր տէրերն էին Կամսարականները: Շինութեան թուականը ծանօթ է մեղի պատմութենէն, բայց յայտնի է որ Քրիստոնէական թուականէն շատ առաջ արդէն գոյութիւն ունէր: Այսպէս՝ զիտենք թէ Օգոստոս կայսրը Հայաստան կը զրկէ իր որդեգիրը՝ Գայիոս Կեսարը, որ կը պաշարէ Արտագերս բերդը Քրիստոսէ մէկ տարի առաջ: Ատոմ նախարարը՝ բերդին պաշտպան՝ կը վիրաւորէ Կեսարը, որ կը մեռնի:

Հետեւաբար այս շրջանին ալ, երբ Հռոմայեցիք Հայաստան կը մտնեն՝ կը յիշեն զայն Արգալիորա անունով:

Բիւզանդ՝ Արտագերս բերդի շինութիւնը Արշակ Բ.ի կու տայ. «Եւ թագաւորն Արշակ հրաման տայր, յԱրշարունեաց վաւառին շինել բերդ մի ամուր, Արտագերս անուն, վասն զի կարի ամուր էր բերդն»(9): Հոս հարկ է մեկնել Բիւզանդի խօսքերը: Հաւանօրէն աւերուած էր ու վերաշինեց, կամ նոր բաժին մը աւելցուց նախկինին վրայ եւ զօրացուց:

Այսպէս դանդաղ կերպով Դ. դարէն մինչեւ Թ. դար կը շինուին նոր բերդեր, մանաւանդ ԺԱ. եւ ԺԲ. դարերուն, երբ Ասիայէն բարբարոս ցեղեր կ'առաջանային մեր երկրէն ներս: Սիւնեաց աշխարհը կարելի է բերդաշխարհ կոչել, ոչ միայն իր բազմաթիւ բերդերուն համար, այլ եւ իր ամուր գիւղերն, բարձր լեռներուն եւ խոր ձորերուն համար:

Բիւզանդ Հայաստանի շատ մը վաւառներ ամուր կը կոչէ, այսպէս «ամուր աշխարհն Սիւնեաց, ամուր վաւառն Արցախայ, եւ ամուր վաւառն Տմորեաց, եւ ամուր աշխարհն Կորդեաց»(10):

Օրբելեան խօսելով Սիւնեաց բերդերու մասին կը թուէ 20-էն աւելին. իսկ Հ. Ալիշան միայն Սիւնեաց աշխարհին մէջ 40-էն աւելի բերդեր կը յիշատակէ իր «Սիւնեան»ին մէջ:

* * *

Մեր պատմիչները երբ կը խօսին Հայաստանի բերդերու մասին՝ կը դործածեն բերդ, ամուր, ամրոց, դղեակ եւ քար: Այս բառերը զանազան առումներ ունին մեր պատմիչներուն քով. այսպէս Օրբելեան քար կը դործածէ շատ անգամ բերդի տեղ. Քարն Բաղակու(11), Քարն Յախաց, Քարն Կիոց, եւ կը հասկնայ բերդ մը որ բոլորովին ժայռերու վրայ շինուած է, եւ բնական ամրութիւն մըն է: Նոյն հեղինակը ուրիշ բերդերու քար չ'ըսեր, այլ՝ Ամրոց, եւ կ'իմանայ բերդ մը ուր բնակութիւն եւս կար, եւ կամ ուր իշխանական ընտանիքներ կը բնակէին. այսպէս, «իսկ Քարդղոս (Հայկի որդիներէն) գնաց ի լեռն որ կոչի Արմազ, եւ անդ շինեաց իւր տուն եւ ամրոց մի անառիկ ի պատշաճաւ տեղով, եւ կոչեաց զբերդն Օրբէք»(12): Կը յիշատակէ Ամրոցն Բաղաբերդ (էջ 234), Ամրոցն Երնջակայ (էջ 185), որոնք բերդեր էին եւ միանգամայն բնակարաններ կամ կեդրոններ քաղաքական իշխանութեան: Ամրոցին հոմանիշ դործածուած է նաեւ դղեակ. այսպէս «Անառիկ դղեկին Սուլեմայ» (էջ 265), «անառիկ դղեկին Հրասեկայ» (էջ 348), որոնք նոյնպէս բերդ բնակարաններ էին իշխաններու:

Իսկ բերդ եւ ամուր կը կոչուէին սահ-

(11) Ստեփ. Օրբելեան, Պատմութիւնն Տանն Սիւսկան, Մոսկվա, 1861, Գլ. Բ. էջ 7:

(12) Անդ, էջ 270:

(9) Փ. Բիւզանդ, էջ 138:

(10) Անդ, էջ 166:

